Հավելված N 1
«ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՇՁԲ-2025/ՏՄ/ՀՀ»* ծածկագրով
էլեկտրոնային աճուրդի հրավերի

# ԴԻՄՈՒՄՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*
## Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու

ՄՈՏՈՒՍ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԹՐԵՅԴ ՍՊԸ-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել
մասնակցի անվանումը

ՀՀ ներքին գործերի նախարարություն-ի կողմից «ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՇՁԲ-2025/ՏՄ/ՀՀ» ծածկագրով հայտարարված

էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) 1 (մեկ) չափաբաժնին
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

(չափաբաժիններին) և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

ՄՈՏՈՒՍ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԹՐԵՅԴ ՍՊԸ –ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է
մասնակցի անվանումը

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ:
երկրի անվանումը

ՄՈՏՈՒՍ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԹՐԵՅԴ ՍՊԸ -ի՝
մասնակցի անվանումը

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 02322166
  հարկի վճարողի հաշվառման համարը
- բանկային հաշվեհամարն է՝ 2050022774601001
  բանկային հաշվեհամարը
- գործունեության հասցեն է՝ ԱՐԻՆ ԲԵՐԴԻ 2-ՐԴ ՆՐԲ., ԹԻՎ 96/3
  գործունեության հասցեն
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ motus-armenia@outlook.com,
  էլեկտրոնային փոստի հասցեն
- հեռախոսահամարն է՝ +37441550010
  հեռախոսի համարը
- ռուսերեն լեզվով անվանումն է՝ МОТУС Продакшн и Трейд ООО
  ռուսերեն լեզվով անվանումը և կազմակերպաիրավական տեսակը

Սույնով ՄՈՏՈՒՍ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԹՐԵՅԴ ՍՊԸ -ն հայտարարում և հավաստում է, որ՝
մասնակցի անվանում

1) ՄՈՏՈՒՍ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԹՐԵՅԴ ՍՊԸ -ն և իրեն փոխկապակցված անձինք
մասնակցի անվանում

բավարարում են «ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՇՁԲ-2025/ՏՄ/ՀՀ»* ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և ՄՈՏՈՒՍ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԹՐԵՅԴ ՍՊԸ -ն պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում

2) ընթացակարգին մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն, գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,

- բացակայում է հիրավերով սահմանված՝ ՄՈՏՈՒՍ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԹՐԵՅԴ ՍՊԸ -ին փոխկապակցված անձանց և (կամ) ՄՈՏՈՒՍ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԹՐԵՅԴ ՍՊԸ –ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս ՄՈՏՈՒՍ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԹՐԵՅԴ ՍՊԸ-ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:
- ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)** և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավատի տեղեկություններ:

| Անունը Ազգանունը Հայրանունը | ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը | Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |

3) ապահովված է դիմում-հայտարարությունը ներկայացնելուց հետո էլեկտրոնային աճուրդի համակարգի կողմից տրամադրված եզակի ծածկագրի (PIN կոդը) անվտանգությունն ու գաղտնիությունը և դրա օգտագործմամբ էլեկտրոնային աճուրդի համակարգում ընթացակարգին մասնակցելուց բխող ցանկացած գործողություն կատարվում է համապատասխան լիազորություն ունեցող անձի կողմից:

Digitally signed by
ORDANYAN TIGRAN 3110880369
Date: 2024-11-23 12:56:29

ՄՈՏՈՒՍ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԹՐԵՅԴ ՍՊԸ , տնօրեն ՝
Օրդանյան Տիգրան

______________________________

Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը)

**Հավելված N 1.3****
«ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՇՁԲ-2025/ՏՄ/ՀՀ »* ծածկագրով
էլեկտրոնային աճուրդի հրավերի**

ՁԵՎ

ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ

Ստորև ներկայացվում է ՄՈՏՈՒՍ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԹՐԵՅԴ ՍՊԸ-ի իրական շահառուների վերաբերյալ
մասնակցի անվանումը

տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝ https://www.e-register.am/am/companies/1569655/declaration/4a7a5661-3248-4480-9ef8-379a9fa8e3bf

Digitally signed by
ORDANYAN TIGRAN 3110880369
Date: 2024-11-23 12:57:45

ՄՈՏՈՒՍ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԹՐԵՅԴ ՍՊԸ , տնօրեն ՝
Օրդանյան Տիգրան
Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

______________________
ստորագրությունը)

Կ. Տ.

ԻՆԵԿՈԲԱՆԿ

22.11.2024 № G8472

**ԵՐԱՇԽԻՔ N EA24/01121**

1. Սույն երաշխիքը, ինչպես նաև սույն երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը (այսուհետ՝ երաշխիք), հանդիսանում են ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՇՁԲ-2025/ՏՄ/ՀՀ ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին «ՄՈՏՈՒՍ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) մասնակցելուց բխող՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված գրավոր պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 22,097,705.00 (քսաներկու միլիոն իննսունյոթ հազար յոթ հարյուր հինգ) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000466 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է մինչև 26/05/2025թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագիրը՝ առանց գումարի չափի մասին նշման, երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի gnumner@mia.gov.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17 հասցեով: Պահանջին կից ներկայացվում է հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ**
**ԿԳ ԳԼԽԱՎՈՐ ԲԻԶՆԵՍ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ** **ԱԶԱՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կատարող՝ Դիանա Ֆարսիյան
Ստորաբաժանում՝ ՎՀԲ
Հեռ.՝ +374 10 510510 (5578)